



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**FINANCIAL SECTOR  
DEEPENING PROJECT**



**ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

*Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ*

*Սույն ուղեցույցի դրույթները և մեկնաբանությունները, կրում են խորհրդատվական բնույթ, իսկ ժամկետները և թվային տվյալները բերված են որպես օրինակ և պարտադիր չէ, որ դրանք նույնությամբ համընկնեն Ձեր նախընտրած ընկերության ապահովագրական ծառայությունների առաջարկությունների հետ:*

## **Իմացե՛ք որ ռիսկերից եք ապահովագրվում**

- Ավտոմեքենաների ապահովագրության ապահովագրության համար առաջարկվող ռիսկերի ծածկույթը և հատուցման բացառությունները
- Ապահովագրության մասին դիմումը
- Առաջարկվող սակագնի և ապահովագրավճարի հիմքերը և շուկայում կիրառվող սակագները

## **Ուշադի՛ր եղեք ողջ ընթացքում**

- Ապահովադրի պարտականությունները պայմանգրի գործողության ընթացքում

## **Ի՞նչ անել դեպքից հետո**

- Ապահովադրի պարտականությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո
- Ապահովագրողի գործողությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո
  - Ապահովագրական դեպքի հավաստումը
  - Ապահովագրական հատուցման առանձնահատկությունները
  - Հատուցման իրականացումը

Վարորդների քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը ամբողջ աշխարհում պարտադիր ապահովագրության ամենատարածված ապահովագրության տեսակներից մեկն է:

ՀՀ-ում 2008 թվականի դրությամբ պարտադիր ապահովագրության որևէ տեսակ օրենքով դեռևս չի ներդրվել: Սույն մեկնաբանություններն ու պարզաբանումները վերաբերվում են ավտոապահովագրության կամավոր ձևին:

## 1. Ավտոմեքենաների ապահովագրության առաջարկվող ռիսկերի ծածկույթը

Ավտոապահովագրությունը, որպես համալիր ապահովագրության տեսակ, իր մեջ ներառում է մի քանի առանձին ռիսկերի բաղադրիչների փաթեթ: Դրանց որևէ համակցում ապահովադիրը կարող է ընտրել իր ցանկությամբ: Առավել տարածված են ավտոապահովագրության հետևյալ ռիսկերի բաղադրիչները.



- 1) Ճանապարհատրանսպորտային պատահարի և այլ բախումների,
- 2) Հրդեհի,
- 3) Գողության

հետևանքով առաջացած վնասներն ու կորուստները,

- 4) Վարորդի և ուղևորների ապահովագրությունը դժբախտ պատահարներից,
- 5) Մեքենայի սեփականատիրոջ կամ վարորդի կողմից երրորդ անձանց պատճառած վնասների ապահովագրությունը:

- Դժբախտ պատահարների ապահովագրական ռիսկերի մեջ ներառվում են.

*ապահովգրված տրանսպորտային միջոցի շահագործման արդյունքում դրա վարորդին՝ և/կամ ուղևորների առողջությանը և կյանքին պատճառված վնասները, մասնավորապես՝ մարմնական վնասվածքների հետևանքով առաջացած վնասները:*

- Երրորդ անձանց պատճառած վնասների պատասխանատվության ապահովագրությունը ներառում է.

*երրորդ անձանց ունեցվածքին և/կամ կյանքին ու առողջությանը տրանսպորտային միջոցի շահագործման արդյունքում հասցված վնասների հատուցում:* (Որոշ դեպքերում պայմանագիրը կարող է նախատեսել նաև փաստաբանական ծառայությունների համար կատարված ծախսերի հատուցում):

Դժբախտ պատահարների և երրորդ անձանց պատճառած վնասների պատասխանատվության առավելագույն գումարը ապահովագրական պայմանագրում կամ վկայագրում սահմանվում է առանձին:

Դժբախտ պատահարների ծածկույթը, որպես կանոն, սահմանվում է գումարային՝ մեկ նստատեղի համար, իսկ երրորդ անձանց պատասխանատվության ծածկույթը գումարային առանձին մեծություններով՝ գույքային և անձնական վնասների համար:

### Հատուցման բացառությունները

Որպես կանոն հատուցման ենթակա չեն այն գույքային կամ անձնական կորուստները կամ վնասները, որոնք կապված են.

- շահագործման ընթացքում կատարված ծախսերի,
- ամորտիզացիոն մաշվածքի,
- մեխանիկական կամ էլեկտրական անսարքությունների ու քայքայման,

- արգելակման համակարգի հետևանքով անվադողերի վնասվածքների ու մաշվածության,
- փորձարկումների, մրցավազքերի և այլ մրցություններին մասնակցելու հետևանքով առաջացած վնասների,
- վերանորոգման հետևանքով ավտոմեքենայի շուկայական արժեքի նվազման,
- խաբեության կամ կեղծիքի միջոցով գույքի ձեռք բերման ցանկացած փորձով պայմանավորված կորուստների կամ վնասի հետ:

Հատուցման ենթակա չեն նաև այն դեպքերը, երբ.


- ապահովագրության պայմանագրով կամ վկայագրով նշված ավտոմեքենան վարել է անձը, որը գտնվել է օրենսդրությամբ սահմանված ալկոհոլի անթույլատրելի չափի կամ թմրանյութերի ազդեցության տակ, և/կամ չի ունեցել սահմանված կարգի վարորդական իրավունք,
- տրանսպորտային միջոցը շահագործել է նախապես անսարք, վնասված վիճակում,
- ավտոմեքենայի բեռնման կամ բեռնաթափման ընթացքում տեղի ունեցած ցանկացած մարմնական վնասվածք, կորուստ կամ վնաս,
- սեփականության իրավունքով ապահովադիրն պատկանող, նրա տնօրինության, տիրապետման տակ գտնվող գույքը, որը վնասվել կամ կորստի է ենթարկվել ապահովագրված մեքենայում:

Անհրաժեշտ է նշել, որ վարկի միջոցով ձեռք բերված ավտոմեքենայի ապահովագրության դեպքում ապահովագրության պայմանագրում բացի ապահովադիրից առանձին կարգավիճակով նշվում է նաև շահառուն, որը հանդիսանում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում ապահովագրական պայմանագրով նախատեսված հատուցում ստանալու իրավունք ունեցող անձը:

Տվյալ պայմանագրում շահառուն հանդիսանում է վարկատու բանկը կամ վարկային կազմակերպությունը: Շահառուի ապահովագրական շահը սահմանափակված է վարկի չնարված մասով:

## 2. Ապահովագրության մասին դիմումը

Ավտոմեքենայի ապահովագրության համար հաճախորդը լրացնում է դիմում, որը պարունակում է **տեղեկություններ ապահովագրվող մեքենայի նրա սեփականատիրոջ կամ մշտապես շահագործող վարորդի** վերաբերյալ:



Ավտոապահովագրության մեջ, որպես կանոն, կիրառվում է լիազորված վարորդ հասկացությունը: Դա այն անձն է որը ապահովագրողի համաձայնությամբ նշվում է պայմանագրում որպես ապահովադիր և, որպես կանոն, 21 տարեկանից բարձր է, ունի նշված կարգի մեքենաներ վարելու առնվազն 3 տարվա վարորդական իրավունք:

Դիմումի բաժիններում, որպես կանոն, նշվում են.

- Լիազորված վարորդի մասին տեղեկությունները՝ անձնական տվյալները, վարորդական ստաժը: Կարող են պահանջվել նաև թույլ տրված խախտումների քանակը, որոնք երբևիցե հանգեցրել են ճանապարհատրանսպորտային պատահարների և այլն:

- Ապահովագրվող մեքենայի վերաբերյալ տվյալները՝ մեքենայի տեխնիկական բնութագրիչները, վիճակը, պետական գրանցման համարանիշը և այլ:
- Տեղեկություններ նախկինում կրած վնասների և կորուստների և հատուցումների մասին:

Դիմումին կից ներկայացվում է ապահովագրական շահը հավաստող փաստաթղթերը, մասնավորապես ավտոմեքենայի սեփականության վկայագիրը, վարձակալելու, լիզինգի պայմանագիրը, որպես շահագործող վարորդ հանդիսանալու վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը (աշխատանքային պայմանագիր կամ այլ հիմք):

### 3. Առաջարկվող սակագինը

Սակագինը կարող է սակարկվել կախված ռիսկերի ծածկություն ընդգրկված ռիսկերի տեսակներից կամ բացառություններից, ինչպես նաև այլ գործոններից:

Ապահովագրական շուկայում բոլոր ռիսկերից ավտոապահովագրության սակագնի միջակայքը, որպես կանոն, ընդգրկում է ապահովագրվող տրանսպորտային միջոցի ապահովագրական գումարի 3,5–6,5 տոկոսը, կախված ապահովագրման օբյեկտ հանդիսացող ավտոմեքենայի առանձնահատկություններից, այդ թվում շուկայական արժեքից և լիազորված (շահագործող) վարորդի անձնական բնութագրիչներից: Որոշ ռիսկեր բացառելու դեպքում ապահովագրական սակագինը կնվազի:

Առանձնահատուկ մեքենաների և ռիսկեր ներառող ապահովագրական սակագինը կարող է տարբերվել վերոնշյալ միջակայքից:

#### Ավտոապահովագրության սակագների օրինակ

Ծածկույթ	Ապահովագրական գումար (տարեկան) ԴՀ դրամ	Ապահովագրական սակագին և ապահովագրավճար ԴՀ դրամ
Բաժին 1. Ֆիզիկական վնաս (ներառյալ ճՏՊ), հրդեհ և առևանգում	մինչև 10,000,000	3.85%
	10,000,000 և բարձր	3.60%
Բաժին 2. Վարորդների և ուղևորների դժբախտ պատահար	2,500,000 մեկ նստատեղի համար	2,500 մեկ նստատեղի համար
	4,500,000 մեկ նստատեղի համար	5,000 մեկ նստատեղի համար
Բաժին 3* Երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվություն	5,000,000	50,000
	20,000,000	100,000
	35,000,000	125,000
	45,000,000	150,000
	55,000,000	220,000

\*Երրորդ անձանց պատասխանատվության ապահովագրության դեպքում ընդունված է ապահովագրական գումարը կամ ծածկույթը բաժանել երկու մասի՝ անձնակն և գույքային վնասների համար: Աղյուսակում նշված ապահովագրական գումարների 50% կամ այլ չափաբաժին կարող է վերաբերվել երրորդ անձանց գույքին հացված նյութական վնասների, մնացած 50% կամ այլ չափաբաժին երրորդ անձանց կյանքին և առողջությանը հասցված վնասների ծածկույթին:

#### 4. Ապահովադրի պարտականությունները պայմանագրի գործողության ընթացքում

Անհրաժեշտ է իմանալ, որ դուք պետք է հստակ կատարեք պայմանագրով Ձեր պարտականությունները պայմանագրի ողջ ընթացքում: Հակառակ դեպքում դուք կարող եք մեծ դժվարությունների հանդիպել կրած վնասի հատուցումը ստանալիս:



### ՅԻՇԵ՛Ք

Պայմանագրի գործողության ընթացքում դուք պարտավոր եք ապահովագրողին տեղեկություններ հայտնել՝

- ռիսկի մեծացման գործոնների մասին,
- այդ տրանսպորտային միջոցի վերաբերյալ այլ ապահովագրական պայմանագրերի կնքման մասին,
- դրա օտարման փաստի մասին,
- տարեկան պարտադիր տեխնիկական զննումը սահմանված ժամկետում չանցնելու փաստի մասին և
- ապահովագրված ռիսկերի այլ եական հանգամանքների փոփոխությունների մասին:

Դուք պարտավոր եք նաև պահպանել հատուկ համաձայնեցված և ապահովագրության պայմանագրի կանոններում առկա այն պահանջները, որոնք ուղղված են ռիսկի նվազեցմանն ու վտանգի կանխարգելմանը, օրինակ՝ հակակողոպտիչ ահազանգող սարքի տեղադրումը, այն դեպքում երբ մեքենան ապահովագրված է գողությունից:

#### 5. Ձեր պարտականությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո

Ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո Դուք, որպես կանոն, պարտավոր եք.

##### Տեղեկությունների հայտնում

- Պայմանագրով սահմանված կամ հնարավոր ավելի սեղմ ժամկետում, օրինակ՝ 24 ժամվա ընթացքում, ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի (դեպքի) առաջացման մասին:
- Պատահարի մասին անհապաղ տեղեկացնել ճանապարհային ոստիկանությանը, դիմելով նրանց դեպքի վայր այցելելու խնդրանքով: Եթե որևէ պատճառով դա հնարավոր չէ եղել իրականացնել, ապա ապահովադիրը պետք է պատահարի մասին ճանապարհային ոստիկանությանը տեղեկացնի դեպքից հետո պայմանագրում սահմանված ժամկետում, օրինակ՝ 24 ժամվա ընթացքում:
- Ապահովագրողին և ճանապարհային ոստիկանությանը տեղեկացնի ավտովթարի կողմ հանդիսացող ավտոմեքենաների պետական գրանցման համարանիշները:
- Կազմի պատահարի ընդհանուր նկարագրությունը:
- Հնարավորության դեպքում պարզի պատահարում ներգրավված այլ անձանց և վկաների անունները, հասցեները և անձնական այլ տվյալները:



## **Համագործակցություն ապահովագրողի հետ**

- Հնարավորություն ընձեռնել ապահովագրողին և ճանապարհային ոստիկանությանը իրականացնելու ապահովագրված մեքենայի տեղազննումը և օժանդակելու ապահովագրական պատահարի հետաքննության իրականացմանը՝ ապահովագրական պատահարի պատճառները և կորուստների մեծությունը բացահայտելու համար:
- Առանց ապահովագրողի հետ նախնական համաձայնության չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն կամ չպետք է կատարի որևէ առաջարկ, խոստում կամ վճարում, կամ կատարի իրավական որևէ ծախսեր:
- Առանց ապահովագրողին տեղեկացման ու համաձայնության չիրականացնել ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած մեքենայի վնասների վերանորոգման աշխատանքներ:
- Ապահովագրողին տրամադրել առաջացած կորստի վերաբերյալ ամբողջ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի փաստը արձանագրելու և փաստացի կորստի մեծությունը գնահատելու համար: Այն դեպքում, երբ նման տեղեկատվությունը բացակայում է, ապահովագրողը պետք է աջակցի ապահովագրողին նման տեղեկատվության ու փաստաթղթերի ստացման գործում: Չպետք է գործի ի վնաս ապահովագրողի շահերի:

## **Վնասների կանխում**

Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի վնասների կանխման կամ նվազեցման համար:

## **Հայտի ներկայացում**

Գրավոր ձևով հայտ ներկայացնել ապահովագրական հատուցում ստանալու համար:

## **Դեպքի մասին ծանուցեք ժամանակին**

Հատուցման վերաբերյալ ծանուցում չիրականացնելու պատճառով ապահովագրողը կարող է չվճարել հատուցումը: Մինչդեռ ժամանակ, առանց ծանուցման ևս կարող է հատուցում տրվել, եթե ապահովագրողը ուներ համապատասխան տեղեկատվություն այդ պատահարի մասին: Սակայն ապահովագրողի տեղեկացվածության հարցը կարող է դառնալ անցանկալի վեճի առարկա և պահանջվի, որ դուք ապացուցեք որ ապահովագրողը գիտեր այդ դեպքի մասին:

## **6. Ապահովագրողի գործողությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո**

Ապահովագրողի գործողությունները գործնականում կոչված են վերացնելու ապահովագրական դեպքի հետևանքները: Դրանք ներառում են հետևյալ փուլերը.

1. Ապահովագրական դեպքի փաստացի հավաստումը, անհրաժեշտության դեպքում՝ ապահովագրական հետաքննության իրականացումը:
2. Վնասի և ապահովագրական հատուցման չափերի հաշվարկումը:
3. Ապահովագրական հատուցման իրականացումը:

Ապահովագրական դեպքի փաստացի հավաստման նպատակով ապահովագրողը փորձում է բացահայտել՝

ա) ի՞նչ ռիսկ է պատճառ հանդիսացել առաջացած վնասի համար, հանդիսանում է արդյո՞ք այն պայմանագրով սահմանված ապահովագրական ռիսկերից,

բ) արդյո՞ք ապահովագրական դեպքի առաջացման հանգամանքներն այնպիսիք են, որոնց հետևանքների համար ապահովագրողը պայմանագրով պատասխանատվություն է կրում կամ չի կրում,



գ) Ե՞րբ է տեղի ունեցել վնասներ առաջացրած ապահովագրական պատահարը, ընդգրկու՞մ էր արդյոք դա այն ժամկետը, որում ապահովագրողը կրում է պատասխանատվություն,

դ) արդյո՞ք պատճառված վնասը հասցվել է այն գույքային շահերին, որոնք հանդիսանում են տվյալ ապահովագրական պայմանագրի օբյեկտ,

ե) առաջացած իրադարձությունն արդյո՞ք տեղի է ունեցել այն վայրում՝ (տարածաշրջանում, տարածքում), որն ըստ պայմանագրի հանդիսանում է ապահովագրության վայր: Մասնավորապես՝ պայմանագրում է կարող է նշվել, որ հատուցման ենթակա են բացառապես ՀՀ տարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարները: Ըստ այդ չեն հատուցվի վրաստանում կամ Իրանում ապահովագրված մեքենայի հետ ի հայտ եկած պատահարները:

## 7. Ապահովագրական դեպքի հավաստումը

Ապահովագրողն ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելիս իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ստանալու նշված հարցերի վերաբերյալ նրանց եզրակացությունը:



Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի պատճառների և առաջացրած վնասի չափի որոշումը պահանջում է հետաքննության անցկացում, ապահովագրական ընկերությունը իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու մասնագիտացված անձանց:

### *Ապահովադրի աջակցությունը*

Ապահովադիրը (շահառուն) իր իսկ շահերից ելնելով և ըստ օրենքի պահանջի պետք է աջակցի ապահովագրողի կողմից իրականացվող հետաքննության ընթացքին: Մասնավորապես, ապահովագրության պայմանագրում, որպես կանոն, նշվում է, որ ապահովադիրը պարտավոր ապահովագրողին և նրա ներկայացուցչին ներկայացնել վնասված գույքը կամ դրա մնացորդները, ապահովագրողին տրամադրել անհարաժեշտ այն փաստաթղթերը, որոնք կպահանջվեն ապահովագրական դեպքի հանգամանքների ուսումնասիրության համար:

Ապահովագրական դեպքը և կրած վնասի չափի հավաստումը, ինչպես նաև հատուցումը իրականացնելու համար պահանջվում է.

### **ԿԱՐԵՎՈՐ Է**

- ճանապարհային ոստիկանության կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի մասին կազմված ակտի պատճեն,
- որպես կանոն, ճանապարհային ոստիկանության կողմից պատահարի մասին կազմված ակտ չի պահանջվի, եթե մեքենայի հասցված գույքային վնասը արդյունք չէ ճանապարհատրանսպորտային պատահարի, տրանսպորտային միջոցի հետ կապված պատահարի հետևանքով չկան տուժած անձինք, այդ թվում մեքենայի վարորդը, ուղեվորները, երրորդ անձինք, ընդ որում պատահարից չեն տուժել նաև կենդանիներ, պատահարից առաջացած վնասը մասնակի է և չի գերազանցում պայմանագրում նշված ապահովագրական ծածկույթը կամ ապահովագրողի կողմից նշված սահմանաչափը:



Բացի այդ հատուցման իրականացնելու հիմքերից է նաև պատահարից առաջացած վնասի (կորստի) չափի վերաբերյալ կազմված ակտը: Այդ ակտը կարող է կազմվել անկախ փորձագետի, կամ ապահովագրողի և ապահովադրի կողմից համատեղ կամ ապահովագրողի կողմից՝ առանց ապահովադրի մասնակցության:

### 8. Ապահովագրական հատուցման առանձնահատկությունները

Որպես կանոն, ավտոապահովագրության պայմանագրում կամ կանոններում հատուկ նշվում է, այն մասին որ, հատուցման գումարը պակասեցվում է պայմանագրում կամ վկայագրում նշված չհատուցվող գումարի չափով: Ստորև աղյուսակում ներկայացված են տարբեր ծածկույթների դեպքում չհատուցվող գումարների չափերը:

Ծածկույթ	Չհատուցվող գումար ՀՀ դրամ
Ֆիզիկական վնաս, հրդեհ	2% սակայն ոչ ավելի քան 50,000 ամեն մի պատահարի դեպքում:
Առևանգում	5% եթե մեքենան ապահովված է ազդանշանային համակարգով, նման համակարգի բացակայության դեպքում 10%:
Դժբախտ պատահար	Ամեն մի պատահարի (վթարի) դեպքում, յուրաքանչյուր անձի համար՝ 20,000:
Երրորդ անձանց նկատմամբ առաջացած պարտավորություն	Որպես կանոն չի կիրառվում:

Ինչպես ամրագրված է պայմանագրում, Դուք, որոշակի ժամկետում պետք է հայտ ներկայացնեք ապահովագրողին, որի հիման վրա, կրկին պայմանագրով սահմանված ժամկետում ապահովագրողը հատուցումը վճարելու կամ մերժելու որոշում է կայացնում:

Այդ որոշումը, ինչպես նաև մերժման հիմքերը ապահովագրողը, որոշում կայացնելուց հետո, հնգօրյա ժամկետում, պետք է պատվիրված նամակով ուղարկի Ձեր բնակության մշտական հասցեով:

Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշման և դրա փաստացի վճարման ժամկետները կարող են տարբեր լինել, քանի որ անգամ ապահովագրական դեպքը հավաստող ակտի պարագայում, ապահովագրական դեպքից առաջացած կորուստների ճշգրտումը կարող է պահանջել համապատասխան մասնագետների ներգրավում և որոշակի ժամանակ:

Ապահովագրական դեպքից առաջացած կորուստների ճշգրտված մեծությունը ամրագրվում է առանձին ակտով:

Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարը հիմնված է լինում կորստի պահին տվյալ ավտոմեքենայի ՀՀ-ում շուկայական արժեքի վրա:

### 9. Հատուցման իրականացումը

#### Հատուցման եղանակները

Ապահովագրական հատուցումը համաձայն պայմանագրի և կողմերի համաձայնությամբ կարող է իրականացվել.

- հատուցվող գումարի դրամական վճարման եղանակով, կամ
- վերականգնողական աշխատանքների և ծառայությունների իրականացման եղանակով, կամ
- գողացված կամ ամբողջությամբ կորստի ենթարկված ավտոմեքենայի փոխարինմամբ՝ նույնատիպ բնութագրիչներ չով ավտոմեքենայով, հատուցման



վերաբերյալ ապահովագրողի տված դրական որոշման կամ եզրակացության և վնասի մեծության ճշգրտումից հետո պայմանագրում սահմանված ժամկետում:

Գողության պատճառով հատուցման դեպքում, որպես կանոն, պահանջվում է որպեսզի առևանգված մեքենան ոստիկանության կողմից ճանաչվի (գրանցվի) որպես կորած:

Չետագայում մեքենան գտնվելու դեպքում ապահովագրողը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել ապահովագրողին, վերադարձնել ընկերությանը իրեն վճարված հատուցումը, կամ գտնված տրանսպորտային միջոցը: Սույն հարցը վերջնական լուծում է ստանում կողմերի համաձայնությամբ:

Տրանսպորտային միջոցի (կամ այնտեղ տեղադրված լրացուցիչ սարքավորումների՝ ավտոձայնագրիչ, ավտոհամակարգիչ, բարձրախոսներ և այլն) գողության դեպքում հատուցումը որպես կանոն վճարվում է պայմանագրում, վկայագրում սահմանված ժամկետում, օրինակ՝ մինչև 90 օրվա ընթացքում:

Այն դեպքում, երբ կորուստների մեծության ճշգրտումը կպահանջի տևական ժամանակ ապահովագրողը, համաձայն պայմանագրի կարող է վճարել հատուցման գումարի մի մասը կանխավճարի ձևով՝ այն չափով, որը կողմերի համար վիճահարույց չէ: Կորստի գումարի մեծությունը ճշգրտելուց հետո ապահովագրողը կվճարի այդ գումարի և կանխավճարի տարբերությունը:

Ապահովագրողն ապահովագրական հատուցումը մերժելու մասին ապահովագրողից տրված որոշումը կամ եզրակացությունը, ինչպես նաև տրամադրվող ապահովագրական հատուցման գումարի մեծությունը կարող է վիճարկել ապահովագրողի հետ, ինչպես նաև բողոքարկվել դատական կարգով: